ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

08.08.2013թ.

ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-35/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-35/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից 19.07.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-35/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ս.թ. հունիսի 14-ին կայացել է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից հայտարարված «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/9» ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի Բանավանի դպրոցի հիմնանորոգման և կիսակառույցի ավարտման աշխատանքների բաց ընթացակարգի էլեկտրոնային մրցույթը:

«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ն հայտնել է, որ 2013թ. պետական բյուջեով դպրոցի շինարարության համար նախատեսվել է 53 միլիոն դրամ գումար, որի մեջ ներառված են բոլոր տեսակի հարկերը (ԱԱՀ, վերադիր ծախսեր, շահույթ և այլն):

Ընկերությունը տեղեկացրել է, որ «ԳՎԻԿ» ՊՈԱԿ-ի 2013թ. թիվ 2 պաշտոնական տեղեկագրով հաշվարկված ծավալաթերթ-նախահաշվի գումարը կազմում է մոտ 61 միլիոն

դրամ գումար (ԱԱՀ, վերադիր ծախսեր, շահույթ և այլն), որը բյուջեով նախատեսված գումարից ավելի է:

Արդյունքում մրցույթին մասնակցած 12 կազմակերպություններից 8-ի մոտ 2013թ. համար նախատեսված գումարը պետական բյուջեով նախատեսվածից ավել է ստացվել և մրցույթի գնահատող հանձնաժողովը անբավարար է գնահատել 8 մասնակիցների հայտերը (ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի 2013թ. հուլիսի 3-ի ծանուցումը):

«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ն գտնում է, որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, որի արդյունքում սահմանափակվել է ընկերության մրցակցության հավասարությունը:

«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/9» ծածկագրով հայտարարված ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի Բանավանի դպրոցի հիմնանորոգման և կիսակառույցի ավարտման աշխատանքների բաց ընթացակարգի էլեկտրոնային մրցույթը:

2. <u>ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 25.07.2013թ. N 04/032-1022 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 19.07.2013թ. «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը 02.08.2013թ. N ՀՍ/1-792-13 գրությամբ «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/9» ծածկագրով բաց ընթացակարգով գնման առարկան է հանդիսացել Կոտայքի մարզի Նոր Գեղի Բանավանի դպրոցի հիմնանորոգման և

կիսակառույցի ավարտման աշխատանքները, որոնց նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակված են եղել «Նիգ-Ռուբշին» ՍՊԸ-ի կողմից:

Աշխատանքի կատարման վերը նշված նախագծանախահաշվային փաստաթղթերը անցել են դրական փորձաքննություն:

Նշված գործընթացում կնքվելիք կապալի պայմանագիրը պետք է լիներ շարունակական, քանի որ 2013թ. ժամանակահատվածում գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը գերազանցում էր գնման ընդհանուր գինը, և մրցույթի արդյունքում նախատեսվում էր կնքել պայմանագիր միայն 2013թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կնքվելիք աշխատանքների համար, իսկ մնացորդային գումարի մասով աշխատանքները կկատարվեին հետագա տարիներին ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Ուստի, հրավերով ներկայացված է եղել ինչպես ընդհանուր ծավալաթերթը, այնպես էլ 2013թ. հատկացվող ֆինանսական միջոցների շրջանակում կատարվող աշխատանքների ծավալաթերթը: Նշված երկու ծավալաթերթերը կազմված են եղել մշակված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա, իսկ նախահաշվային գինը մշակվել է նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված աշխատանքների ծավալների և միավոր գների պահպանմամբ:

Մրցույթի ընթացքում, «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված է եղել գնային առաջարկ ինչպես ընդհանուր աշխատանքների, այնպես էլ 2013թ. նախատեսված աշխատանքների համար, սակայն վերջինիս համար սահմանված գինը գերազանցում էր նախատեսված նախահաշվային գինը:

Միևնույն ժամանակ, ըստ «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի նախագծանախահաշվային փաստաթղթերի վերահաշվարկ կատարելիս հիմք է ընդունվել 2013թ. փետրվար ամսվա թիվ 2 պաշտոնական տեղեկագիրը: Մինչդեռ համաձայն նախահաշվի բացատագրի, «Շինարարական նյութերի արժեքները վերցված են 2012թ. N 12 ինֆորմացիոն տեղեկագրից»:

Այսպիսով, նշված աշխատանքների ձեռքբերման համար գնման գործընթացն իրականացվել է բաց ընթացակարգով էլեկտրոնային եղանակով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության բոլոր պահանջների պահպանմամբ: Գնման գործընթացի ժամանակ հնարավորություն է ընձեռնված եղել ինչպես «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ին, այնպես էլ մյուս մասնակիցներին՝ ներկայացնել սեփական գնային առաջարկները, իսկ ներկայացված

հայտերը գնահատվել են նվազագույն գնային առաջարկին նախապատվություն տալու սկզբունքով: Մասնակիցների համար ապահովված են եղել գնման գործընթացում մասնակցելու հավասար հնարավորություններ, և մրցակցության որևէ սահմանափակում տեղի չի ունեցել:

Պատվիրատուն կարևորել է նաև այն հանգամանքը, որ հայտի մերժման հիմք նշված է եղել այն, որ ընդհանուր գինը ներկայացված է եղել առանց շահույթի:

Մասնավորապես, Հրավերի 7.3. կետի համաձայն՝ «Գնային առաջարկը ներկայացվում է Կայքում՝ առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք հարկերի և տուրքերի /ավելացված արժեքի հարկի և այլն/ գումարի չափի»:

ARMEPS համակարգում և հայտի 4-րդ հավելվածում «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 141.892.928,00 ՀՀ դրամ: Այսինքն վերջինս պետք է ներառի նաև շահույթը:

Սակայն, ինչպես երևում է ներկայացված ծավալաթերթ-նախահաշվից, 141.892.928,00 ՀՀ դրամ գումար համարվում է ընդհանուր աշխատանքների գումարը, որի մեջ չի ներառում շահույթը, քանի որ շահույթը ներկայացված է առանձին տողով և կազմում է 11351,434 հազար ՀՀ դրամ:

Հաշվի առնելով, որ «ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/9» ծածկագրով բաց ընթացակարգի ժամանակ մրցակցության որևէ սահմանափակում տեղի չի ունեցել և «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ն որևէ կերպ չի ներկայացրել իր կողմից նշված փաստերի որևէ պատշաճ հիմնավորում, «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը գտնում է, որ բողոքը ենթակա է մերժման:

Ի լրումն «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի 02.08.2013թ. N ՀՍ/1-792-13 գրության Պատվիրատուն 08.08.2013թ. N ՀՍ/1-823-13 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի 2012թ. դեկտեմբերի 27-ի թիվ 390-Լ հրամանի 4-րդ էջից քաղվածք, որտեղ նշված է, որ Նոր Գեղի Բանավանի դպրոցի հիմնանորոգման և կիսակառույցի ավարտման շինարարական աշխատանքների համար 2013 թվականի հատկացման չափը կազմում է 53.974.485 ՀՀ դրամ:

3. ԳԲԽ-35/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից 19.07.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-35/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-35/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Բողոքաբեր ընկերություն) կողմից 19.07.2013թ. ներկայացված բողոքը, «ՔՆՔԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-13/9» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից «ՔՆՔԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-13/9» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտը, ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 02.08.2013թ. N ՀՍ/1-792-13 և 08.08.2013թ. N ՀՍ/1-823-13 գրությունները, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից ՀՀ Կոտայքի մարզի գ. Նոր Գեղի Բանավանի դպրոցի հիմնանորոգման և կիսակառույցի ավարտման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔՆՔԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-13/9» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ ընկերությունների հայտ է ներկայացրել նաև «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ն:

«ՔՆՔԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-13/9» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ծանուցմամբ «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար, քանի որ 2013թ. առկա ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների համար գնի առաջարկը գերազանցել է 2013 թվականի համար նախատեսված հատկացման չափը և ընդհանուր գինը ներկայացվել է առանց շահույթի:

Բողոքաբեր ընկերությունը Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ 2013թ. պետական բյուջեով դպրոցի շինարարության համար նախատեսվել է 53 միլիոն դրամ գումար, որի մեջ ներառված են բոլոր տեսակի հարկերը (ԱԱՀ, վերադիր ծախսեր, շահույթ և այլն), մինչդեռ «ԳՎԻԿ» ՊՈԱԿ-ի 2013թ. թիվ 2 պաշտոնական տեղեկագրով հաշվարկված

ծավալաթերթ-նախահաշվի գումարը կազմում է մոտ 61 միլիոն դրամ գումար (ԱԱՀ, վերադիր ծախսեր, շահույթ և այլն), որը բյուջեով նախատեսված գումարից ավելի է:

Պատվիրատուն 02.08.2013թ. Կենտրոնին ներկայացված N ՀՍ/1-792-13 գրությամբ հայտնել է, որ «ՔՆՔԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-13/9» ծածկագրով բաց ընթացակարգով գնման առարկան է եղել Կոտայքի մարզի Նոր Գեղի Բանավանի դպրոցի հիմնանորոգման և կիսակառույցի ավարտման աշխատանքները, որոնց նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակված են եղել «Նիգ-Ռուբշին» ՍՊԸ-ի կողմից և անցել են դրական փորձաքննություն:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ ըստ «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի նախագծանախահաշվային փաստաթղթերի վերահաշվարկ կատարելիս հիմք է ընդունվել 2013թ. փետրվար ամսվա թիվ 2 պաշտոնական տեղեկագիրը, մինչդեռ համաձայն նախահաշվի բացատագրի, շինարարական նյութերի արժեքները վերցված են 2012թ. N 12 ինֆորմացիոն տեղեկագրից:

Պատվիրատուն 08.08.2013թ. N ՀՍ/1-823-13 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի 2012թ. դեկտեմբերի 27-ի թիվ 390-Լ հրամանի 4-րդ էջից քաղվածք, որտեղ նշված է, որ Նոր Գեղի Բանավանի դպրոցի հիմնանորոգման և կիսակառույցի ավարտման շինարարական աշխատանքների համար 2013 թվականի հատկացման չափը կազմում է 53.974.485 ՀՀ դրամ:

«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ն «ՔՆՔԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-13/9» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի հավելված N 4 հանդիսացող գնային առաջարկում նշել է, որ ուսումնասիրելով «ՔՆՔԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-13/9» ծածկագրով գնման գործընթացի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով՝

- Առաջարկված ընդհանուր գինը՝ 183.893.234 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,
- 2013թ. առկա ֆինանսական միջոցների շրջանակներում առաջարկված ընդհանուր գինը՝ 59.234.321 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Բողոքաբեր ընկերությունը Կենտրոնին ներկայացված բողոքով նշել է, որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, որի արդյունքում սահմանափակվել է ընկերության մրցակցության հավասարությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համաձայն նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ շինարարական աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

ՀՀ կառավարության 29.12.2011թ. «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» N 1916-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի դրույթները՝ հաշվի առնելով նույն որոշման 1-ին կետով հաստատված կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 26-րդ կետի համաձայն՝ շինարարական աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա, եթե տվյալ շինարարական աշխատանքի համար նախագծային փաստաթղթերի առկայությունը և (կամ) դրանց փորձաքննությունը պարտադիր է:

«ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/9» ծածկագրով բաց ընթացակարգով գնման առարկա հանդիսացող Կոտայքի մարզի Նոր Գեղի Բանավանի դպրոցի հիմնանորոգման և կիսակառույցի ավարտման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերը մշակվել են «Նիգ-Ռուբշին» ՍՊԸ-ի կողմից, որը ենթարկվել է փորձաքննության և առկա է դրական եզրակացություն: Նախահաշվում նշվել է, որ շինարարական նյութերի արժեքները վերցված են 2012թ. N 12 ինֆորմացիոն տեղեկագրից: Ընդ որում ըստ 2013թ. կատարման ենթակա աշխատանքների նախահաշվային արժեքն ըստ առանձնացված ծավալաթերթի կազմել է 53974,48 հազար դրամ:

Տվյալ դեպքում «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից 2013թ. կատարման ենթակա աշխատանքների համար առաջարկված գինը գերազանցել է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, իսկ Պատվիրատուի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սկզբունքների խախտում առկա չէ:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից 19.07.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամներ՝ Ռուդիկ Օրդյան

Լիդիա Պողոսյան